

II

Մ Ա Ր Գ Ա Ր Է

Այն օրից, երբ Տէրն յաւերժ, երկնաւոր
Ինձ մարգարէի պարգեւեց շընորհ,
Ես պարզ կարգում եմ, զերդ փսուր մի էջ,
Արապ ու չարիք մարդկանց աչքի մէջ:

Ես ըսկսեցի քարոզել մարդկան
Ե՛ւ սէր, և՛ ուսմանը սուրբ ճշմարտութեան,
Բայց զինեաժ իմ դէմ իմ մերձաւորներ՝
Մոլեգին վերաս նետեցին քարեր:

Եւ գըլխիս վերայ ես մոխիր ցանած,
Անապատ փախա՛յ՝ աղքատ, հալածւած.
Այնորեղ եմ ահա ապրում գոհ կեանքով,
Որպէս թռչուններ—Տիրոջ բարիքով:

Այնորեղ Բարձրեալի պառլէրը պահած՝
Ինձ խոնարհւում է ամեն արարած.
Այնորեղ և՛ ասորներ եթերի միջից
Խնդազին փաշով ունկնդիր են ինձ:

Բայց երբ անցնում եմ արագ քայլերով
Ես աղմկաշատ քաղաքի միջով,
Վերաս ցոյց տալով՝ ինքնասէր, սիւզանձ
Ժըպրում են ծերերն ու ասում մանկանց.

Նայեցէք, ահա, նա ձեզ օրինակ,
Գոռոզ էր—մեզ հետ չըվարեց հաշի կեանք.
Անմիտն ուզում էր համոզել մարդկանց,
Որ նորա լեզուով խօսում է Ասուած:

Նայեցէք, որդիք, դուք նորա վերայ.
Ինչպէս և՛ մըռայլ, և՛ գունաւոր է նա,
Ինչպէս նիհար է, մերկ, անօգնական,
Ինչպէս ամենքն էլ ապրում են նորան: